

15372

321

hu-82

1610

ՀԱՅ ԶԻՆԵՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Nº 1

Վ. ԽՈՐԵՆԻ

ԳԻՆՆ Է ՅՈՂՎՐԴԱԿԱՆ

Ի՞նչ է յողվրդական

ՀԱՍՏԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

1610

ԲԻՑԼԻՄ

Տպարան «ԱՇԽԱՏԱՀՈՐ» Գուղ. 39.

1918



15 MAY 2013

75312

324

hi-82

15 JAN 2010
26 SEP 2016

Ի՞ՆՉ Է ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՀԱՍՏԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

1.

Խ Ն Զ կ Պ Ե Տ Ա Կ Թ Ւ Ի Ն Ը

Երբ մի ժողովուրդ որոշ տեղի կամ երկրի հետ կապւում և որոշ պարապմունք է ունենում, իր համար կարգեր, օրէնքներ ու իշխանութիւն հաստատում,—ասում ենք, թէ այդ ժողովուրդն իր համար պետութիւն է ստեղծել: Ուրեմն պետութիւն ասելով՝ հասկանում ենք այն, որ ժողովուրդն ունի որոշ տեսակի կառավարութիւն՝ իշխող կամ իշխողներ, ունի զօրք, որոշ կարգեր, հարկ է տալիս և այլն, և այլն:

Այս տողերը կարգացողը կարող է հարցնել.
—«Ապա էլ ուրիշ ինչպէս կարող է ժողովուրդն ապրել. ախր չէ որ ժողովուրդն ամեն տեղ էլ պետութիւն է կազմում, կառավարութիւն ունի. չէ որ պետութեան գլուխ կանգնած է լինում թագաւորը, որի պատճառով պետութեանը նաև թագաւորութիւն ենք ասում»:



2142-2002

Բայց բանն այդպէս չէ:

Եղել է ժամանակ, և եղել են, ու հիմա էլ կան երկներ, ուր ժողովուրդը Շթագաւորութիւն - պետութիւն չի ունեցել, կամ էլ պետութիւն-կառավարութիւն ունեցել է, բայց թագաւոր չի ունեցել: Այդպիսի ժողովուրդները կամ ոչ մի պետութիւն, իշխանութիւն չեն ունեցել կամ էլ երկիրը կառավարել են առանց թագաւորի և իշխանի: Ժողովուրդների կեանքի պատմութիւնը մեզ ասում է, որ ինչպէս ամեն բան, այնպէս էլ պետութիւն ասածդ ժամանակի հետ է զարգացել ու փոփոխել: Եղել է ժամանակ, երբ մարդիկ ապրել են առանց որևէ իշխանութեան, ինչպէս որ հիմա էլ Աֆրիկայի ու Աւստրալիայի վայրենի ցեղերը: Նրանք ոնցի և պաշտպանութեան համար թափառել են տեղից տեղ, չեն ունեցել որոշ տեղ, ընակարան ու պարապմունք, այլ զբաղւած են եղել միայն որս ճարելով և իրենց պաշտպանելով բոլորն էլ որսորդներ ու զինորներ են եղել և նոյն իսկ իրար հետ հաստատ կապւած չեն եղել: Դրա համար էլ կենդանիների պէս ապրող այդ վայրենի կամ կիսավայրենի մարդիկ ոչ մի իշխանութիւն և կամ պետութիւն չեն ունեցել: Այսպիսի կենցաղի ժամանակ նրանք կարիք չեն ունեցել ոչ հաստատ օրէնքների, ոչ առանձին զօրքի և ոչ էլ իշխանութեան: Ուրեմն զրանք

ոչ միայն «թագաւորութիւն», այսինքն թագաւորի իշխանութիւն չեն ունեցել, այլ և «պետութիւն» կամ որևէ ուրիշ տեսակի իշխանութիւն չեն ունեցել: Բայց բանը այսպէս չի մնացել: Կամաց-կամաց մարդկանց կեանքը փոխւել է: Ծնւելու և պաշտպանւելու կարիքից մարդիկ ստիպւած են եղել թափառական կեանքն ու անհաստատ պարապմունքը թողնել և «նստել» - մի տեղ տուն դնել և որոշ արհեստով պարապել: Այս դէպքում ասում են, որ ժողովուրդը նստակեաց է դարձել, երկրագործութեամբ, անամնապահութեամբ կամ այլ արհեստներով է ապրում:

Նստակեցութիւնը և հաստատ պարապմունքները փոխում են ժողովրդի կեանքի եղանակն ու բնաւորութիւնը: Հիմա էլ առաջւայ պէս ամբաղջ ժողովուրդը չի կարողանում որպարդ և զինուոր լինել ու իրեն պաշտպանել: Ժողովրդի աշխատանքը բաժաննում է և այս հաստակէտից: Որոշ մարդիկ միայն պաշտպանութեան գործով են զբաղւում և կազմում են զինուորականների գասը: Տոհմի և ցեղի պետը կամ մեծը զանում է իշխան և սկսում է ժողովրդին պաշտպանել զրոխ թշնամիներից ու կոռավարել նրան, ստեղծելով որոշ կարգ, օրէնք: Այսպիսով հիմք է զրում պետութեան: Պետութեան այս առաջին անկատար տեսակները

կոչւում են տոհմապետութիւն և ցեղապետութիւն:

Ի հարկէ բանն այսպէս չի մնում: Տոհմային և ցեղային պետութիւնը հետզհետէ հարեան ցեղերի վրայ յարձակելով, նրանց նւաճելով և ժողովրդին ճնշելով՝ ուժեղանում ու մեծանում է: Դրա հետ մեծանում, շատանում են նաև տոհմապետի և ցեղապետի իրաւունքները. նրանք դառնում են մեծ իշխան, թագաւոր:

Որքան մեծանում են իշխանի և թագաւորի պետութեան և իրաւունքի սահմանները, այնքան պակասում է ժողովրդի իրաւունքը: Թագաւորը երկիրը կառավարում է ազնւականների հետ, պահում է մշտական զօրք նաև իր ժողովրդին ճնշելու համար: Ժողովրդին մնում է միայն-զինուոր ու հարկ տալ և հլու հպատակութիւն ցոյց տալ: Այսպիսով թագաւորը դառնում է երկիրի ու ժողովրդի միակ և ինքնակալ տէրը կամ միապետը:

Պետութեան այս տեսակը կոչւում է անսահման կամ ինքնակալ միապետութիւն: Բայց կայ նաև միապետութեան մի այլ տեսակը, որը կոչւում է սահմանադրական միապետութիւն: Առաջ ծանօթանանք անսահման միապետութեան հետ:

2.

ԱՆՍՈՂՄԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Անսահման միապետութիւնը կատարեալ բռնապետութիւն է. այսպիսի պետութեան զլուխ կանգնած միապետը, որ կարող է կոչւել իշխան, թագաւոր կտմ կայսր, իր իրաւունքների մէջ ոչնչով սահմանափակւած չէ: Ոչ մի բան նրա միահեծան իշխանութեանը սահման չի զնում: Ինքնակալ միապետը, ինչպէս օրինակ՝ Սուլթանը, Ցարը,—ինչ որ ուզում այն էլ տնում են: Հարկեր են զնում, հարկեր հաւաքում, ծախսում, շռայլում, զինւոր հաւաքում, պատերազմ անում, երկիր ծախում երկիր առնում, գատում, գատապարտում, ներում կամ կախում իրենց քէֆը տալիս է:

Մի խօսքով, կատարեալ կամայականութիւնն է իշխում միապետութեան մէջ: Ժողովուրդը ոչ մի իրաւունք, ազատութիւն ու ձայն չունի անսահման ու բռնակալ միապետութեան մէջ: Բըռնակալ միապետը ոչ մի օրէնք, արդարադատութիւն չի ճանաչում, որ սահման դնի իր իշխանութեանը: Նրա խօսքը օրէնք է:—«Թագաւորի կամքը առաջին օրէնքն է», այսպէս են զրել նրանք իրենց մեծահատոր օրէնսդրքերի առաջին տողում: Այդ նշանակում է, որ թագաւորը, եթէ կամենայ, եթէ քէֆը տայ, կարող է միշտ էլ

փոխել մնացած բոլոր օրէնքները, այսինքն իբ
արածները միշտ էլ արդարացնել «օրէնքնե-
րով»:

Որպէսզի իրենց այս անսահման իշխանու-
թիւնը միշտ էլ անսահման ու անխախտ մնայ,
միապետները աշխատել են ցոյց տալ, ժողովրդ-
ուն համոգել, որ իրենց իշխանութիւնը մարդ-
կանցից, ժողովրդից չեն ստացել, այլ՝ Աստծուց:
Ռւսակի և նրանք յայտարարում և գրում են, որ
իրենք թագաւորում են «Կամօքն Աստուծոյ»:
Նրանով ուղում են ասել, որ իրենց իշխանու-
թիւնը ժողովրդից չեն ստացել, և ժողովուրդն
էլ իրաւունք չունի ոչ խառնւելու իշխանութեան
գործում, ոչ էլ թագաւորին գահից զրկելու կամ
փոխելու:

Եւ նրանք հասել են իրենց նպատակին.
Խոաւար, անզիտակից և հաւատացող խեղճ ու
կրակ ժողովուրդն էլ հաւատացել է իր բռնա-
կալներին ու դահիճներին, «սուրբ-սուրբ արել»,
ողաշել և հլա-հնապանդ ծառայել նրանց: Եւ
բռնապետների գահերը հաստատուն են մնացել,
քանի որ ժողովուրդները չեն հասկացել, որ ա-
մեն իշխանութիւն միայն իրենց կամքով և իրենց
համար պէտք է լինի:

Միապետները ոչ միայն աշխատել են, որ
ժողովուրդը իրենց իշխանութիւնը աստածային
համարի, այլ և իրենց իշխանութիւնը տւելի

հաստատ ու անխախտ պահելու համար ժառան-
գական են դարձրել: Նրանք շատ լաւ են հաս-
կացել ժողովրդի միամտութիւնը, որ եթէ իշխա-
նութիւնը կամ թագաւորութիւնը ժառանգական
լինի, ժողովրդի համար աւելի ընդունելի և հաս-
տատ լինի: Ժողովուրդն այդ կտեսնի և կհաւա-
տայ, որ աստածային օրէնք է. այդպէս եղել է,
այդպէս էլ պէտք է լինի: Եւ իսկապէս՝ նրանք
համում են իրենց նպատակին դիր ու պատմու-
թիւն չիմացող ժողովրդի մարդը աչքը բաց է
անում, այդպէս տեսնում և ընդունում, որ ժա-
ռանգական ու անսահման միապետութիւն պէտք
է լինի: Դրա համար է, որ Ռոմանով ցարերի
տունը Ռուսաստանում 300 տարի թագաւորեց
և հազիւ հիմա գահից զրկւեց:

Իրենց իշխանութիւնը հաստատ պահելու հա-
մար միապետները այսքանով չեն բաւականա-
նում. Նախ նրանք ժողովրդին տգէտ են պահում,
ուսում չեն տալիս, ժողովրդի համար ձրի ու-
սումնաբաններ չեն բաց անում: Նրանք շատ
լաւ գիտեն, որ ամենից հլու-հնազանդ ժողո-
վուրդը խուար, անուս ժողովուրդն է: Նրանք
ոչ միայն ժողովրդին ուսում չկն տալիս, այլ և
աշխատում են խուարացնել, աւելի բթացնել
նրա միտքը հոգեւորականութեան միջոցով. իմա-
նալով որ ժողովուրդը հաւատացող և կրօնասէր
է՝ նրանք ոչ մի ջանք և ծախս չեն խնայում,

որ հոգևորականութեան, ուրեմն նաև կրօնի ազդեցութիւնն ուժեղ լինի ժողովրդի վրայ. դրա համար նրանք ամեն տեղ շքեղ, ուսկեզօծ, գրաւիչ եկեղեցիներ են շինում և ամեն տեղ քահանաներ պահում։ Հոգևորականներն ամեն կերպ աշխատում են հաստատ պահել ժողովրդի մէջ այն հաւատը, որ թագաւորը «Աստծու կամքով» է իշխում։

Սրանով էլ չբաւականալով՝ միապետութիւնը զիմում է կոպիտ ուժին. նա պահում է զօրանոցներում բթացրած, հլուճնազանդ մշտական զօրք և լաւ կազմակերպւած ոստիկանութիւն, որոնք բռնապետութեան ամենահաստատուն սիներ են, նրա կոյր գործիքներն ու ամենավստահելի զէնքերը։ Ժողովրդի խոռվութեան կամ ապստամբութեան դէպքում զօրքի ու ոստիկանութեան միջոցով միապետական կառավանութիւնը իսկոյն արիւնով, երկաթով, կախաղաններով ու բանտերով խեղդում է նրանց արդար քողոքի ձայնը։

Այսպէս է ահա հաստատ պահում անսահման միապետութիւնը։ Եւ որովհետեւ նրա իշխանութեան զինաւոր ոյժն ու հիմքը ոստիկանութիւնն է, ուստի և այդպիսի պետութիւնը ոստիկանական պետութիւն է կոչում։

3.

ԱՆԴՐՈՆԵԳՐԱԿԵՆ ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Սահմանադրական է կոչում այն միապետութիւնը, որի մէջ միապետի իշխանութիւնը կամ կամքը սահմանափակւած է ժողովրդի իշխանութեամբ—նրա ներկայացուցիչների ժողով։ Այսպիսի պետութեան մէջ իշխանութիւնը բաժանւած է միապետի և ժողովրդի մէջ։ Նայած պետութեանը՝ կամ ժողովրդի իրաւունքն է աւելի շատ լինում միապետի իրաւունքից և կամ հակառակը։ Սահմանադրտկան միա զետութեան մէջ ժողովրդին պատկանում է զինաւորապէս օրէնքներ տալու և դատելու իրաւունքը, իսկ կառավարութիւնը մնում է միապետին, թէև այստեղ էլ նրա իշխանութիւնը սահմանափակած է ժողովրդական օրէնքներով։

Ժողովրդի օրէնսդիր ժողովը կոչուում է պարլամենտ կամ ժողովրդի ներկայացուցիչների (պատգամաւորների) ժաղով։ Պարլամենտն է ուրոշում երկրի հիմնական օրէնքները՝ սահմանադրութիւնը (կոնստիտուցիա), որոնցով պէտք է սահմանափակվի միապետի իշխանութիւնը։ Ժողովրդի կամքը յայտարարուում է պետութեան զինաւոր օրէնքը։ Սահմանադրական միապետութեան մէջ միապետը ստիպւած է ընդունելու, որ ինքը ոչ թէ Աստծու, այլ ժողովրդի կամքով

է թագաւորում: Սահմանադրական միապետութեան մէջ կառավարութեան հիմքը համարում են օրէնքը, ինաւունքն ու արդարութիւնը. զրահամար էլ այդպիսի պետութիւնը կոչում է իրաական: Ժողովուրդը պարտապիր և ձրի ուսում է ստանում, զօրքն ու ոստիկանութիւնը ծառայում են ժողովրդին և այլն:

Ուրեմն կատարեալ սահմանադրական միապետութեան մէջ ժողովրդի կամքն է իշխում, ժողովուրդն է իր ընտրած մարդկանց. միջոցով երկիրը կառավարում: Բայց և այնպէս, որքան էլ չինի, միապետութիւնը մնում է «միապետութիւն»: Որքան էլ սահմանափակւած լինի, բայց և այնպէս միապետը—թագաւորը կամ կայսրը, նենց իր անունով, զիրքով, նեղինակութեամբ և այլ միջոցներով որոշ ազդեցութիւն է ունենում և իր հերթին սահմանափակում ժողովրդի իշխանութիւնը: Ուստի և սահմանադրական միապետութիւնն էլ կատարեալ ժողովրդական ու իրաւական պետութիւն չէ:

4.

ԳՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՑՎԵՑՈՒԹԻՒՆ

Հասարակապետութիւնը միապետութեան միանգամայն հակառակն է: Ժառանգական միապետների փոխարէն ժողովրդի պլուս կանգ-

նած է՝ ժամանակաւորապէս ընտրած նախադանը (պրեզիդենտը):

Հասարակապետութեան մէջ ամբողջ իշխանութիւնը,—ոչ միայն օրէնսդրականն ու դատավարականը, այլ և կառավարականը,—գտնուում է ժողովրդի ձեռին: Ժողովուրդն է օրէնքներ տալիս և զրանց համաձայն դատում ու կառավարում: Երկիրը կառավարում է ամբողջ հասարակութիւնը կամ ժողովուրդը. զրահամար էլ այդպիսի պետութիւնը կոչում է հասարակապետութիւն (ուսապուրլիկա) կամ ժողովրդապետութիւն:

Բայց հասարակապետութիւնն էլ կարող է ոչ ժողովրդական պետութիւն դառնալ: Այստեղ էլ կարող է իշխանութիւնը՝ հասարակութեան փոքր մասի, ոչ աշխատաւորների—հարուստների ձեռն ընկնել: Հասարակապետութիւնն էլ կարող է ազնւապետական և բուրժուական դառնալ, ինչպէս հին Հռոմում, Յունաստանում և այժմ Ամերիկայում և այլն:

Եթէ թագաւոր չկայ, այդ դեռ չի նշանակում, որ ժողովուրդն է իշխանութեան ու երկրի տէրը: Հասարակապետութեան զլուխը—նախագահը կամ պրեզիդենտն էլ կարող է թագաւորին հաւասար իրաւունքներ ստանալ և մի տեսակ ժամանակաւոր թագաւոր դառնալ ու թագաւորից էլ մեծ իրաւունքներ բանեցնել. օրի-

նակի համար՝ ֆրանսիացոց հասարակապետութեան նախագահը աւելի մեծ իրաւունքներ ունի, քան թէ Անգլիայի թագաւորը։ Սա այսքան քիչ իրաւունքներ ունի, որ նրա համար ասում են, թէ «թագաւորը թագաւորում է, բայց չի կառավարում»։ Երկիրը կառավարում է հասարակութիւնը, ժողովուրդը։

Որպէսզի այսպիսի բան չդուրս գայ, որ թագաւոր չինի, բայց թագաւորի հաւասար իշխանութիւն լինի, պէտք է այնպէս անել, որ երկրի ամբողջ իշխանութիւնը աշխատաւոր ժողովրդի ձեռին լինի։ Բոլորս էլ զիտենք, որ հասարակութեան մէջ երկու մեծ դասակարգեր կան—աշխատաւոր և ոչ-աշխատաւոր։ մի մասը՝ մեծ մասն աշխատում է։ իսկ մի փոքր մասն առանց աշխատելու ամեն բան ստանում է ու վայելում։ Պէտք է այնպէս անել, որ իշխանութիւնը սրանց ձեռը չընկնի։

Եթէ իշխանութիւնը, այսինքն երկրի համար օրէնքներ տալլ, դատելն ու կառավարելը թողնենք ոչ-աշխատող դասակարգերին՝ հողատէրերին ու փողատէրերին, սրանք հասարակապետութիւնից մի նոր բռնապետութիւն կստեղծեն։ Հասարակապետութիւնն անունով, ձևով ժողովրդական կըլինի, բայց իսկապէս հարուստների պետութիւն կըլինի, ազնւապետական ու

հարստապետական հասարակապետութիւն կըգառնայ։

5.

ՕՐԻՆՍԴԻՔ ԺՈՂՈՎ ԵՒ ՍԱՀՄԱՆԾԴԻՔ ԺՈՂՈՎ

Ի՞նչ պէտք է անել, որ հասարակապետութիւնը լինի իսկական ժողովրդական պետութիւն։

Դրա համար պէտք է այնպէս անել, որ պետութեան համար օրէնքներ տւող ժողովը ժողովրդական լինի, այսինքն, որ սրա անդամները գոնէ մեծ մասամբ աշխատաւոր ժողովրդի ներկայացուցիչները լինեն։ Այս ժողովրդական կամ ներկայացուցիչների ժողովը (պարլամենտը) կոչւում է նաև օրէնքները լինքն է որոշում։

Այն զէպքում, երբ հին կարգերն ընկնում են, պետութեան մէջ նոր կարգեր հաստատելու համար հաւաքւած ժողովրդական ներկայացուցիչների ժողովը կոչւում է Սահմանադիր կամ Հիմնադիր։ Այսպէս է կոչւում, որովհետեւ նա է սահմանում կամ որոշում նոր պետութեան—հասարակապետութեան հիմնական, գրլիսաւոր օրէնքները կամ սահմանադրութիւնը (կոնստիտուցիան)։

Հիմնադիր ժողովը իր զերը կատարելուց գեասյ, այսինքն պետութեան ձևը կամ տեսակը

և զիսաւոր օրէնքներն ու կարգերը որոշելուց
յետոյ ցրւում է: Նրա տեղը գալիս է օրէնսդիր
ժողովը, որը մշտապէս հետևում է պետութեան
գործերին, նոր օրէնքներ է տալիս, հսկը փոխում,
հսկում, թէ նախագահն ու նախարարները (մի-
նիստրները) ինչպէս են ծախսում ժողովրդական
փողերը և այլն:

Ուրեմն հասարակապետութիւնը կառավար-
ում է ժողովրդական օրէնսդիր ժողովով, նա-
խագահով և նախարարներով: Եւ ժողովուրդը
պէտք է այնպէս անի, որ դրանք բոլորն էլ ժո-
ղովրդի մարդիկ լինին, ժողովրդի շահերը պաշտ-
պանող: Իսկ որպէսզի այդ այդպէս լինի՝ պէտք
է ինքն ընտրի, ձայն տայ իր ուզած մարդուն:
Նրա համար էլ նա պէտք է ազատ ու անկախ
մարդ—քաղաքացի լինի, պէտք է ազատ ընտրել
կարողանայ: Մի խօսքով՝ պէտք է բոլոր մար-
դիկ հաւասար և ազատ քաղաքացիներ լինին:
Սովորաբար ասում են, թէ բոլոր մարդիկ պէտք
է քաղաքացիական—մարդկացին իրաւունքներ ու
ազատութիւններ ունենան:

Առանց այս քաղաքացիական իրաւունքների
ու ազատութիւնների իսկական ժողովրդական
պետութիւն—ժողովրդական հասարակապետու-
թիւն ունենալ չի կարելի:

6.

ՅԱՂԱԳՈՅԻՆՔՆԵՐ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԵՐ

Որո՞նք են այդ իրաւունքներն ու ազատու-
թիւնները:

Դրանք բոլոր մարդկանց բնական և ան-
կապտելի իրաւունքներն են: Ֆրանսիական մեծ
յեղափոխութիւնն առաջին անգամ որոշ արտա-
յայտեց այն անվիճելի ճշմարտութիւնը, որ «բո-
լոր մարդիկ ծնւում են ազատ ու հաւասար և
պէտք է ազատ ու հաւասար էլ մասն իրենց ի-
րաւունքներով»: Դա կոչում է իրաւական կամ
քաղաքացիական հաւասարութիւն: Բոլոր քաղա-
քացիներն օրէնքի առաջ և պետութեան մէջ ի-
րաւունքներով հաւասար են համարւում. Ամեն
քաղաքացի ազատ է այնքան, որքան որ ուրի-
շին չի վնասում, և միայն օրէնքն է որոշում
նրա ազատութեան սահմաննեոր:

Այդ նշանակում է, որ ամեն մի քաղաքա-
ցու կեանքն ու անձն ապահով պէտք է լինի.
Կամայականութեամբ կամ բռնութեամբ ոչ ոքի
ազատութիւնից զրկել, բանտարկել կամ աքսո-
րել չի կարելի: Առանց դատարանի ոչ մի պա-
տիժ: Ամեն մէկի բնակարանը և նամակագրու-
թիւնը ապահով պէտք է լինի ամեն տեսակ
կամայականութիւնից: Պէտք է լինի ազատու-
թիւն խղճի—դաւանանքի, մտքի—խօսքի, մա-



մուլի, ժողովների, միութիւնների։ Բոլոր քաղաքացիները անխափը իրաւունք ունին դաւանելու, ինչ կրօն որ ուզում են, խօսելու, քարողելու, զըելու, ինչ որ և ուր որ կամենում են, եթէ միայն այս խօսքն ու քարողը հասարակութեան մեծամասնութեան համար մնասակար չէ համարում։ Քաղաքացիներն իրաւունք ունին ժողովներ անելու, միութիւններ կազմելու և այլն, և ոչ ոք չպէտք է նրանց այդ արգելի։

Այս քաղաքացիական—մարդկային իրաւունքներն ու ազատութիւններն ունենալով միայն՝ մարդիկ կարող են օգտուել իրենց միւս քաղաքացիական և քաղաքական իրաւունքներից—ընտրելու և ընտրւելու, օրէնքներ տալու, դատելու և կառավարելու։ Առանց մէկի միւսը լինել չի կարող։ Առանց քաղաքացիական ազատութիւնների ընտրական իրաւունքներից օգտուել, ուրեմն և ժողովրդական օրէնքներ, կարգեր ու կառավարութիւն հաստատել, չի կարելի։ Օրինակ՝ ինչպէս կարող են քաղաքացիք ազատ ընտրել ու ընտրւել, ներկայացուցիչներ ուղարկել կամ ներկայացուցիչ լինել՝ պետական կեանքին մասնակցել, եթէ ապահով չլինի նրանց անձը, քնակարանը, նամակագրութիւնը, եթէ նրանք իրենց ուզածն ասել, գրել, քարողել կամ գրահամար մարդկանց ժողովել—միութիւններ ու կուսակցութիւններ կազմել չկարողանան։ Եթէ

այդ բոլոր ազատութիւնները չլինին՝ ընտրական իրաւունքներն էլ խօսքով կըմինին, բայց զործով չեն լինի։

7.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆՏՐԵԿԱՆ ԽԱՐԱՐՈՒՆՔ

Իսկ ինչպէս պէտք է լինին ընտրական իրաւունքները, որ աշխատաւոր ժողովուրդը իսկական հասարակապետութիւն կազմել կարողանայ:

Ընտրութիւնները պէտք է լինին նախ՝ ընդհանուր։ այդ կնշանակի, որ ամեն մարդքաղաքացի ընտրելու իրաւունք ունի, ով 20 տարեկան է դարձել, ամեն մարդ, լինի նա ազքատ թէ հարուստ, ուսումնով թէ անուսում, ուսւ թէ այլազգի։ Միայն նրանք չեն կարող ընտրել կամ ընտրւել, ովքեր կամ 20 տարեկանից փոքր են, կամ խելագար, կամ էլ հասարակութեան դէմ ծանր յանցանք են կատարել։ Եւ իսկապէս, ով կուզի, որ երեխաները կամ խելագարները խառնւեն հասարակութեան գործին։ Դրա համար էլ, չնայած որ այդպիսի մարդիկ չեն մասնակցում, ասում ենք ընտրութիւնը ընդհանուր է։

Ապա ընտրութեան իրաւունքը հաւասար պէտք է լինի։ այդ կնշանակի, որ ամեն մարդ, ամեն քաղաքացի—հարուստ թէ աղքատ—միայն մի ձայն։ ունի. օրինակ չպէտք է հարուստները

շ, 3, 4 և աւելի ձայն ունենան, իսկ աղքատ-ները՝ 1 ձայն։ Դրա համար ասում ենք — մի մարդ՝ մի ձայն։

Ընտրութիւնը պէտք է ուղղակի լինի, այսինքն ում որ ժողովուրդը կամենում է ընտրել իրեն ներկայացուցիչ կամ պատգամաւոր՝ նրան էլ պէտք է ընտրի։ Էլ չպէտք է առաջ մէկին ընտրի, որ նա էլ մի ուրիշն ընտրի։ առ ուղղակի ընտրութիւն չի լինի, այլ անուղղակի։ Օր՝ եթէ ժողովուրդն ուզում է Պետրոսին ընտրել իրեն պատգամաւոր՝ նրան էլ պէտք է ընտրի, և ոչ թէ առաջ Մարկոսին պէտք է ընտրի, որ առ նոր իր կողմից Պետրոսին ընտրի։

Ընտրութիւնը պէտք է գաղտնի լինի։ Սա էլ նրա համար է, որ, օրինակ գործարանատէրը, տանուտէրը, շնորհիկը չիմանայ՝ թէ զիւղացին կամ բանւորը ում է ձայն տալիս. պարզ բան է, որ իմանան՝ կարող են սրանց որևէ ձևով նեղացնել, գործից հեռացնել և այս։

Եւ վերջապէս ընտրութիւնը պէտք է համեմատական լինի։ Այս էլ շատ դժւար հասկանալի բան չէ։ Ասենք մի զիւղում կամ գործարանում կան 3000 մարդ։ Ասենք զրանք պէտք է 3 պատգամաւոր ընտրեն։ Եթէ միայն ընդհանուր և հաւասար ընտրութեան սկզբունքը լինի՝ 2000 հոգին, որ մեծամասնութիւն է, եթէ միւս հազարին հակառակ է, կարող է միշտ էլ իր ու-

զած մարդուն անց կացնել. իսկ էս 1000 հոգին չեն կարող մարդ անցկացնել. սրանց ձայները կխեղդւեն, ուրեմն ներկայացուցիչ չեն ունենայ։ Արդարութիւնը պահանջում է, որ էս 1000-ն էլ մի մարդ ընտրեն. 2000 հոգին՝ 2 մարդ, 1000 հոգին՝ մէկ մարդ։ Ուրեմն ամեն կողմը կընտրի իր թիւ համեմատ պատգամաւորներ. դրա համար էլ ասում ենք ընտրութիւնը պէտք է լինի համեմատական։

Ահա այսպէս պէտք է լինին ընտրութիւնները, որպէսզի քաղաքացին, մանաւանդ խեղճ ու աղքատ ժողովուրդն իր ճանաչած, սիրած, վստահելի մարդկանց ընտրել կարողանայ, որ իր շահերը պաշտպանեն։ Մինչև որ այս հինգ պայմաններով — ընդհանուր, հաւասար, ուղղակի, պազմինի և համեմատական, — շինին ընտրութիւնները, ժողովուրդը երբէք էլ իր ուզած օրէնքներն ու կառավարութիւնը չի տեսնի, ուրեմն միշտ էլ խեղճ ու աղքատ կապրի։

Բայց դա բաւական չէ։ Որպէսզի իսկառէս ժողովուրդը կարողանայ իր խօսքն անց կացնել և իմանայ հաստատ, որ իր ուզածը կկատարւի, պէտք է իսկն ուղղակի, առանց պատգամաւորների կամ ներկայացուցիչների միջնորդութեան, մասնակցի և ձայն տայ պիտութեան գլխաւոր գործերը, մանաւանդ օրէնքները որոշելիս։ Պատգամաւորն էլ մարդ է, կարող է խօսքը փոխել,

կոշառել և Հիմնադիր Ժողովում կամ պարլամենտում (օրէնսդիր ժողովում) էն չասեր, ինչ որ իրեն պատւիրել են: Որպէսզի այսպիսի բաներ չպատահեն՝ լաւ կլինի, որ ժողովուրդն ինքն անձամբ մասնակցի և ձայն տայ պետութեան գլխաւոր զործերի քննութեան ժամանակը: Սրան ասում են ժողովուրդը պէտք է անմիջական ձայնաւութեան (ըէֆերենտումի) իրաւունք ունենայ:

Ժողովուրդը կարող է անմիջապէս իր ձայնը լուսի դարձնել նաև գրաւոր կերպով—ինդիքներով և առաջարկներով: Ժողովուրդը կարող է զըրել, որ այսինչ կամ այնինչ օրէնքը փոխվի այսինչ ընթել, որ այսինչ կամ այնինչ օրէնքը փոխվի այսինչ կամ այնինչ բանն այսպէս լինի: Սրան ասում կամ այնինչ բանն այսպէս լինի: Սրան ասում կամ այնինչ բանն առաջարկներ անելու (պետիցիայի) իրաւունք պէտք է ունենայ:

Բայց դէ այլ բան է կենդանի խօսքն ու ձայնը երես առ երես, այլ բան՝ գրածը: Դրածը աւելի հեշտ է մերժել, քան ասածը: Աւելի լաւ է, որ ժողովուրդն ուղղակի, առայց միշնորդների իր կեանքի ու բախտի գլխաւոր հարցերն ինքը որոշի: Կասեն սա լաւ է, բայց գժւար է. ինչպէս կարող է ամբողջ ժողովուրդը հաւաքւել մի տեղ և ձայն տալ, այն էլ Ռուսաստանում, թէ ինքն ինչ է ուզում: Ճիշտ է, այդպէս գըժւար է: Բայց եթէ լաւը այդ է, որպա համար էլ պէտք է նաարներ գտնել:

8.

ԳԱՅՆԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Իհարկէ, որ Ռուսաստանի պէս մեծ պետութիւնների մէջ զժւար, անկարելի բան է, որ ամբողջ ժողովուրդը հաւաքւի սի տեղ և օրէնքներ ու վճիռներ տալիս ձայն ունենայ: Դրա համար էլ պէտք է մեծ պետութիւնները բաժանեն փոքր, ինքնավար մասերի—պետութիւնների: Սրանք իրենց ներքին գործերում անկախ կիննեն, այսինքն իրենք իրենց կկառավարեն, բայց ընդհանուր գործերում, ինչպէս են օրինակ՝ երկրի պաշտպանութիւնը, առեսուրը, պոստը, դւամը և այլն, կմիանան, կկազմեն մի մեծ պետութիւն: Այսպիսի պետութիւնը կամ, ասենք, հասարակապետութիւնը կինի փաքր պետութիւնների միութիւն՝ կամ գաշնակցութիւն (Փեղերացիա): Այսպէս իրար հետ միացած պետութիւնները կոչւում են գաշնակցական պետութիւններ, խոկ զրանց միութիւնը՝ գաշնակցական միապետութիւն—(օր.՝ Գերմանիան), կամ գաշնակցական հասարակապետութիւն—(օր.՝ Շվեյցարիան, որ կազմուած է 25 գաշնակից պետութիւններից և Հիւսիսային Ամերիկայի Միացեալ կամ Դաշնակցական պետութիւնները, որոնք 45 հատ են):

Միայն գաշնակցական—(Փեղերացիւ) հասարակապետութեան մէջ կարող են ժողովուրդ-

Ները պաշտպանել իրենց շահերն ու իրաւունք-ները: Միայն այսպիսի պետութեան մէջ նրանք կարող են հաստատ համոզւած լինել, որ իրենց իշխանութիւնն անխախտ կինի: Ուրեմն միմիայն դաշնակցական հասարակապետութիւնը կարող է խսկապէս ժողովրդական լինել:

9.

ԵՐ ՊԵԼՋԵԱՆ, ԹԷ ԵՐԿՊԱԼԱՏԵԱՆ ՊԱՐԱՍԵՆՑ

Ժողովրդապետութեան, ժողովրդի իշխանութեան համար մի վտանգ էլ կայ: Նոյնիսկ ամենազարդացած հասարակապետութիւնների մէջ էլ մի վտա կարդ կայ: Օրէնսդիր ժողովը կամ պարլամենտը միայն ժողովրդի պատրամաւորներից չի լինում բաղկացած և միայն մի հատ չի լինում, այլ երկու հատ: Մէկը լինում է խսկապէս ժողովրդի ներկայացուցիչների ժողովը, զրա համար էլ սա կոչւում է և համայնքների ժողով, օր՝ Անդիմիայում: Իսկ միւս ժողովի անդամներին ժողովուրդը չի ընտրում: որանց հրաւիրում կամ նշանակում են հարուստներից, հոգեորականներից, կալւածատէրերից: որովհետեւ Անդիմիայում կալւածատէրերին լորզ են ասում, զրա համար էլ զրանց ժողովին լորզերի ժողով կամ լորդերի պալատ են ասում:

Ուրեմն մի ընդհանուր ժողովի—պարլամեն-

տի փոխարէն երկու ժողով ենք ունենում. մէկը առհասարակ ժողովրդի՝ միւսը միայն հարուստների համար: Եւ սրա վնասն այն է, որ սրանք ջոկ-ջոկ ժողով են ունենում. և հարուստների ժողովը կամ—ինչպէս ասում են—«վերին պալատը» կարող է խանգարել, չթողնել, որ ժողովրդական ժողովի—ստորին պալատի» կամ իսկական պարլամենտի որոշումներն օրէնք դառնան: Վերին պալատը, սահմանադրական միապետութիւնների մէջ նաև թագաւորը, իրաւունք ունի արգելելու ստորին պալատի օրէնքները: Հենց որ հարուստները տեսնում են, որ պարլամենտի որոշած օրէնքն իրենց շահ/ն վնաս է, իսկոյն արգելում են, այսինքն իրենք էլ չեն ընդունում, որ գա օրէնք դառնայ: Եւ այսպէս միշտ խանգարում են պարլամենտի գործը ու չեն թողնում, որ ժողովրդի համար լաւ, օգտակար օրէնքներ ու կարգեր սահմանեն:

Դրա համար էլ իսկական ժողովրդական հասարակապետութեան մէջ 2 պալատ-պարլամենտ չպէտք է լինի: Պարլամենտը—օրէնսդիր ժողովը միայն մի հատ պէտք է լինի մի ընդհանուր ժողով՝ կամ, ասում են, մի պալատից պէտք է լինի բաղկացած:

10.

ՀԱՍՏԱՏՈՒԹԵՑՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ

Մի վերջին վտանգ էլ կայ: Դա հասարակապետութեան նախագահն է: Ճիշտ է, դա ընտրովի պէտք է լինի և պէտք է փոխութ շուտ-շուտ: Բայց դրան էլ չպէտք է շատ իրաւունքներ տալ, մանաւանդ՝ չպէտք է երկար ժամանակով ընտրել: Երկու դէպում էլ նա կարող է իր իրաւունքներն ու իշխանութիւնն ի չարը գործ դրնել և մէկ էլ տեսար՝ մի օր մի նոր բռնապետ՝ միապետ դարձաւ, թագաւոր, կայսր և այլն: Պատմութիւնն այսպիսի բաներ էլ շատ է տեսել: Դրա համար փորձւած և պատմութիւնից քան սովորած ժողովուրդն իր նախագահին երկար ժամանակով չի ընտրի, մի տարուց ոչ աւելի, և, որ գլխաւորն է, շատ մեծ իրաւունքներ չի տալ նրան: Շատ իրաւունքներ տալ նախագահին՝ նշանակում է իր գլխին մի անթագթագաւոր նստեցնել: Օր. Ֆրանսիայի հասարակապետութեան նախագահն աւելի շատ իրաւունքներ ունի՝ քան միապետական Անգլիայի թագաւորը: Եւ շատ ժամանակ Ֆրանսիայի նախագահը ի չարն է գործ դնում իր նախագահական իրաւունքները և վասում ժողովրդին: Նա կարող է նոյնիսկ պատերազմ սկսել հակառակ ժողովրդի կամքի, առանց նրա գիտութեան: Որ-

պէսզի այդպիսի բաներ չպատահեն, պէտք է շատ քիչ իրաւունքներ տալ նախագահին և պէտք է ընտրել միայն մի տարութ: Իսկ որպէսզի թէ նախագահը և թէ նախարարները միանգամայն պատասխանառու լինեն ժողովրդի առաջ, պէտք է ունենալ մի կառավարական մարմին, որ ամեն բանով պատասխանառու լինի ժողովրդի առաջ: Նախագահը միայն այդ մարմանի ներկայացուցիչը կինի ժողովրդի առաջ: Օր.՝ մօտաւորապէս այդպէս է Շվեյցարիայում:

Մինչև որ այդպէս չլինի, մինչև որ թէ նախագահը, թէ նախարարները և թէ առհասարակ ամեն իշխանութիւն ժողովրդի և իր ժողովի՝ պարլամենտի առաջ պատասխանառու չլինին և ուղակի չենթարկեն գրան, ժողովրդապետութիւնը գատարէ խօսք կլինի: Ժողովուրդը միշտ էլ ստրուկ ու խեղճ, հարստահարւած ու ճնշւած կլինի, չի իմանայ, թէ ինչպէս են հաւաքում ու ծախսում իր փողերը և կմնայ մշտական ազիտութեան ու թշւառութեան մէջ:

Ուրեմն իսկական և կատարեալ ժողովրդական իշխանութեան համար և սոցիալիզմի համար պատրաստել կարելի է միայն մի-պալատեան դաշնակցական (ֆեդերատիւ) և ժողովրդական (գեմոկրատիկ) հասարակապետութեան մէջ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0198607

